տան օճախը վառող: Ծնողները նրան են յանձնում ամբողջ գործը:

Նա է, որ ծանօթացնում է երիտասարդներին ու համաձայնութիւն կայացնում երկու տների մէջ:

Հարսանիքի ծէսը շատ է պարզ: Հարսնացուն ամբողջապէս սպիտակը հագած, որ խոր սգի նշան է, թողնում է իր հօրանց տունը եւ ուղեւորւում է պատգարակի մէջ դէպի իր նոր ընտանիքը միջնորդի ու նրա կնոջ առաջնորդութեամբ:

Եւ այդ աղջիկը իր ընտանիքի համար այլեւս մեռած է համարւում: Հօրանց տանը նրա գնալուց անմիջապէս յետոյ աւելում են սենեակները: Իսկ տան մուտքի մօտ վառում են սուգի ճրագը, ճիշտ այնպէս, ինչպէս մեռելը դուրս տանելուց յետոյ:

Մինչդեռ փեսայի տանը ուրախութիւն է:

Հարսն ու փեսան խմում են «սակէ», բրնձի արաղ, երեք փոքրիկ գաւաթիկներից, երեք-երեք կում. նրանից յետոյ հարսնացուն փոխում է իր սուգի հագուստը, հագնում է տօնի զգեստներ, եւ ամեն-ինչ վերջանում է ընդհանուր խնջոյքով:

⁂

Աշխատանքի մէջ ճապոնացի կինը իր մարդու առաջին օգնականն է: Նա մասնակից է դաշտային աշխատանքին, օգնում է առեւտրական գործերի մէջ եւ ընդհանրապէս կատարում է նրա հետ ամեն տեսակ աշխատանք:

Ճապոնուհու սիրած գործերից են երգը, նւագը, նկարչական եւ գրական աշխատանքը, որոնց մէջ նա շատ յայտնի է. մանաւանդ գրականութեան մէջ: Առանձին հռչակ է վայելում բանաստեղծուհի Օնօնա Կոմաչ: Եւ ընդհակառակը՝